

թառամ պսակն . և սատանայ ամենայն դիւզն իւրովք ի հեռաս-
տանէ կացեալ՝ կրճտէր զատամունս իւր և ողբայր զկործանումն
իւր՝ որ յաղթեցաւ ի փոքր մանկանէ միովէ » : Երեք անգամ
ճամբուն վրայ կանկ առաւ դահիճն՝ խոստմամբք հրապուրելով և
մերձաւոր մահուան մը վախով ուզելով ահաբեկել իսկ նա ու-
րախ և զուարթագէտ՝ կը նայէր մերկացեալ սրոյն որ իրեք ան-
գամ շողայր անմեղ պարանոցին վրայ , փափաքանօք անձկալով
այն ցանկալի մահուան :

Մայիսի հնգետասան ու մարերի ութերորդ օրն էր յորում
հանդիպեցաւ Երջանիկ վիպայի նահատակութիւնը , և մարմինը
անթիւ բազմութեամբ ամենայն քրիստոնեայ բնակչաց քաղաքին
ամփոփեցաւ պատուով :

Նոր Նախիջևանի Սուրբ Խաչ եկեղեցւոյ Գանձարա՛, գրքէ
մը քաղենք հետեւեալ տողերը ի գովեստ նահատակին :

« Սուրբ Պարոն—Լոյս ծաղի՛ ծիրանի ,
Կարմիր արեամբ ներկեալ ի մարմնի .
Սուրբ Պարոն—Լոյս նոր չող երփնարփի՛
Աստղ առաւօտու նոր արուսեկի ,
Սուրբ Պարոն—Լոյս նոր վարդ ի թըփի՛
ի ձմերային սուղ ժամանակի .
Սուրբ Պարոն—Լոյս նոր արմաւենի ,
Տընկեալ ի գնացըս , ջրոյն կենդանի .
Սուրբ Պարոն—Լոյս նոր շուշան հովտի
Նարդոս քըրքում զըմուռ ընդ հալուի .
Սուրբ Պարոն—Լոյս պարարտ ձիթենի .
Նոր պատուաստեալ յորթըն հայրենի .
Սուրբ Պարոն—Լոյս մաքուր սղաւնի՛
Բարձրաթըռիչ որպէս զարծուի... »

Բ Ո Ղ Ո Ք

Աշունը անցաւ փառքերով բոլոր
Տիրեց ձըմեռը դաշտեր՝ սար և ձոր ,
Մըղտագոյն ամպեր երկընքում կապոյտ
Ալեկոծւէին պըտոյտ առ պըտոյտ :
Քօղեց արեւին ոսկեթոյր երես

Մըթնեց աշխարհքը մի խոր սրգոյ պէս :
Բոլոր բընութիւն շընչաւոր անշունչ
Մահատիպ քընով խըմրել էին մունջ ,
Յըրտաշունչ հիւսիւս սառըն շըրթներով
Փըշում էր անդուլ անխիղճ անգորով :
Քաղաքներ գիւղեր ժայռերի պէս պաղ
Անդ կանգնուումէին անշարժ և խաղաղ :
Բընակիչներից մեծատուն մասը ,
Տոհմերից ազնիւ և բարձըր դասը՝
Ամենքն էլ իւրեանց տըններում քաշւած ,
Մի խոր մեղկութեան խալառ մատնըւած ,
Հանգիստ անվըրդով կեանք էին վարում :
Ձըմեռն էլ նորանց կարծես թ'էր գարուն :
Կեր և խում առատ հանդէսներ անթիւ ,
Փափուկ հեշտութեամբ գիշերն էլ զերդ տիւ
Անցնում էր , զըւարթ անհոգ և անխախտ
Հոգսերի աշխարհն նորանց էր դըրդատ :
Բաղդն էլ անփոփոխ ժըմտում էր անուշ ,
Նորանց վարդն էլ իսկ ծընւում էր անփուշ :
Անխիղճ վաշխերում կարծւում են արդար ,
Անգուլթ գործերում կոչւում են հանճար :
Եւ այդ հոգեծախ շահերին համար՝
Քանի՛օն զոհեր անթիւ անհամար ,
Աչերը արցունք , սըրտերում արին
Գընալով գընում են մինչ գուռ մահուն :
Բայց հարուստներից շատերն անտարբեր ,
Ճըշմարտութեանը վերայ կեղծ ըսուեր
Թողլով , ելնում են Աստուծոյ տաճար՝
Կարծում ես՝ սուրբ սիրտ և հոգի խոնարհ ,
Խընդրում են իւրեանց մէն օգտին համար
Միշտ յաջող գործեր , հանգիստ կեանք երկար :
Եւ ինչ որ ունին՝ կարծում են Աստուած
Միշտ ըստ արժանոյն նորանց է տըւած :
Այսպէս բոլորն էլ խիղճներով ազատ՝
Չուզէին յիշել՝ որ իւրեանցից զատ ,
Կային շատ անմեղ մարդիկ բանական
Կարօտ չոր հացի փըշրանքին անգամ :
Յուրտը փըշում էր , սառն ու ձիւն բոլոր
Խեղճերուն տըններ ընկըղմել էր խոր՝
Մահատիպ սովը ոսկրոտ ձեռքերով ,

Խորդդում էր նորանց անսիրտ անգորով,
Հանապազորդեան աղքատիկն իսկ հաց,
Որ թըլառնների ջերմ քրրտամբ օծւած
Այդ իսկ նորանցից պակասում էր միշտ
կամ տալիս էր շատ տառապանք և վիշտ.
Հին պատառոտուն ըզգեսաներ կեղտոտ
Ծածկէր խեղճերին իբրեւ պիղծ անօթ.
Ուր պարունակէր Աստուծոյ հոգին,
Այն՝ որ Քրիստոսի սուրբ արեանն էր գին,
Դողդոջուն ծերեր կանգնած մահուն գուռ՝
Վըտիտ և նիհար գէմբերով տրխուր,
Սեպած չրթներ լուռ և անտրտունջ
Թողովին սերունդն անտէր անտէրունչ,
Կոյս և պատանի՝ բոյսերի նրման,
Քաղցրաբոյր ծաղկով ծաղկելոյ փոխան,
Թարչամած՝ տըժգոյն տատանին երեւ
Կըրելով բաղդին մահաշունչ հովեր.
Որոնցից բըռնի հալածւած բոլոր
Կորընչին անյոյս սեւ արեւ սեւ օր. —
Մայրեր չարատանջ կըմախքների պէս
Հագիւ հազ շարժին ըսուերներ կարծես.
Անմեղ երախալք գըրկեցում տոչոր՝
Գիրգ կոկոն ծառի խամրւած և չոր,
Զուրկ գերդ կենսատու ցօղից երկնասոր
Մ'օր կաթից անգամ՝ քաղցր և սիրածոր.
Կեանքի դառնութեան բաժակից ժանգոտ
Առնէին ցաւով սընունդ ժահահոտ.
Մ'անուկներ կայտառ՝ հեզ գառնէր անմեղ,
Աստ և անդ ցըրւած անհովիւ անտեղ,
Մ'եծնային անկիրթ սըրտով անմըշակ,
Մ'արգոյ անկմանը ճըշմարիտ գուշակ.
Խեղճերին փափուկ սըրտից խոր մատաղ
Մ'ուրթեան սերմը օրից օր աւանդ,
Թողում է արմատ կըրքերի անբոյժ,
Մ'արդկութեան ցեղին հարւած մահադոյժ...
Սորանցից 'ի զատ դեռ որչափ անզօր
Դըժբաղդ հիւանդներ Աստուծոյն իր օր,
Անբըժիչ՝ անդեղ թողած անխըտիր,
Սեւ հողը գըրկած զերդ սողուն զագիր,
Քաղցած և ծարաւ մեռանին 'ի զուր

Անյուշ-յիշատակ ցամաքին զերդ ջուր :
Ո՛վ արդեօք այդ խեղճ զոհներին համար ,
Երկընքին առջեւ տայ պիտի համար .
Ո՛վ Աստուծոյն սուրբ պատկերին պատիւ ,
Նորան ցաւերը՝ վըշտերը անթիւ ,
Պաշտպանէ պիտի բսփոփէ սիրով
Վառւած՝ բորբոքւած երկնային հըրով...
Ո՛վ մարդկութիւնն անկումից այս նոր
Ազատէ պիտի ձեռքերով հըզօր...
Այո՛ , նոր մարդը այս նոր անկումից
Կարող է փըրկել այն պըտուղն անբիծ ,
Որն որ Գողգոթին բարձըր դազաթում
Չոր փայտին վերայ միայն է ծընւում...
Պըտուղն այն Սէրն է արեամբ ոռոգւած
Որ մեղի համար մըշակեց Աստուած... :

ԱՌԱՅԵԱԼ ԱՆՏՈՆԵԱՆ ՆԱԼԲԱՆԳԵԱՆ

ՍՏՈՐԱԳՐՈՒԹԻՒՆ ՆԱԽԻՋԵԻԱՆՈՒ

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

(Տես յէջ. 220)

ԽԱՇՆԱՏԱԾՈՒԹԻՒՆ, ՄԵՂՈՒԱԴԱՐՄԱՆՈՒԹԻՒՆ, ՇԵՐԱՄԱՊԱՀՈՒԹԻՒՆ

ՆԻ ՀԱՒԱՐՈՒԾՈՒԹԻՒՆ

ԱՄԵՆԷՆ լաւ ոչխարները Որդուատու վիճակի մէջ կը դար-
մանեն . իսկ Դարալաղըդ նշանաւոր է գլխաւորապէս խոշոր ա-
նասուններով և իւր ձիերով , յորոց վերջիններս ոչ թէ ջոկերով ,
այլ երկ երկու կամ երեք երեք կը պահեն . ձիերու հարստու-
թեամբ նշանաւոր է Դարալաղըդի Ճուլ գիւղն : Ընդհանրապէս
գոմէշներ ու մատակներ Նախիջեւանու վիճակի զնստագոյն տե-
ղեաց մէջ կը պահեն . ուր լաւ գոմէշ մի՛ մազանդարաւ անուա-
նեալ ցեղէն , (որ յայլոց կ'որոշի ճակտին վրայ ունեցած գրեթէ
եռանկիւնի , պիտակ նիշովն և ոտից ստորին մասանց և պոչին